№ 193 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 1900 ՈՒՐԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13 № 193

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչո՞ւ չը հետեւել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Կաղզուանից. Նամակ Խըմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական նոր պարլամենտը. Կ. Պոլսի լրագիրներից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր-Նախիջեւանի գործերից.

ԻՆՉՈՒ ՉԸ ՀԵՏԵՒԻԼ

—

Մեր առաջ դրած է մի հետաքրքիր տեղեկագիր, որից պարզ տեսնում ենք, թէ ինչպէս գիւղական ազգաբնակութիւնը կարող է կատարելագործութիւններ մտցնել իր տնտեսութեան մէջ, երբ նա դիմի ինքնագործութեան։ Ռուսաստանի հիւսիսային նահանգներից մէկը, այն է Վեատկայի նահանգը, որի տնտեսական պայմանները մօտ են մեր սարահարթերի պայմաններին, փորձեց գիւղերի համար մեքենաներ և գործիքներ ձեռք բերել հասարակական հաշւով և ունեցաւ աջողութիւն։ Այդ նահանգում արդէն 51 գիւղ գնել են ընդհանուր հաշւով գործիքներ և կազմակերպել են նրանց գործադրութեան համար կանոններ։ Օրինակ, գիւղերից մէկը, որ բաղկացած է 520 տնից, գնել է հինգ հատ կալսող մեքենայ, նըշանակել է իւրաքանչիւրի վրա մի կառավարիչ, որ հերթով կալսում է գիւղացիների հացահատիկները։ Գիւղացիները մեքենայից օգտվելու համար տալիս են մի որոշ վճար, որով հոգացվում է կառավարչի վարձատրութիւնը և հանդցվում է մեքենայի գնելու համար արված ծախքը։ Այդ նահանգը Վեատկայի նահանգն է։ Այնտեղ գնված են 44 կալսելու մեքենայ, 134 գութան, 114 տափան, 34 քամիչ մեքենայ, 5 ընտրող, 3 հատիկ չորացնող և այլն։

Ուրիշ նահանգներ, տեսնելով այդ աջող փորձերը, սկսել են հետաքրքրվել և մտադիր են ձեռնարկել նոյնատեսակ գործունէութեան։ Այն, ինչ որ դժուար է առանձին գիւղացիների համար, նա հնարաւոր է գիւղական հասարակութիւնների համար։ Գիւղը իր ամբողջութեամբ ոչ միայն հեշտութեամբ կարողանում է փող ձեռք բերել գործիքներ գնելու համար, այլ և վայելում է վստահութիւն, երբ գործիքները պէտք է գնվեն պարբերական ապառիկ հատուցման պայմանով։

Նոյնը կարելի է իրագործել և մեզանում։ Գիւղական հասարակութիւնները կարող են ընդհանուր ոյժով ձեռք բերել մեքենաներ, դիմելով, օրինակ, կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան, որ բացել է գործիքների, սերմացուների և ուրիշ նիւթերի պահեստ և աշխատում է կարելին չափ էժանացնել նրանց գինը։

Սակայն գիւղացիներին դրդողներ են հարկաւոր, որոնք հասկացնէին գործի էութիւնը, միացնէին նրանց ընդհանուր ձեռնարկութեան համար և նպաստէին գործի վերջնական կազմակերպութեան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Բարբարոսական արարքների մէջ եւրոպական ազգերը միմեանցից յետ մնալ չեն ուզում։ Այդ բանը ցոյց տալու համար բաւական է մի անգամ թերթել սարսափների այն գիրքը, որ բազմաթիւ դժբախտ սեւամորթների արիւնով գրվում է Աֆրիկայի երկնքի տակ։ Այդտեղ գերմանացիները, անգլիացիները, բելգիացիները աշխատում են միմեանց գերազանցել գազանային քաջագործութիւնների մէջ։ Ահա ինչեր է պատմում պ. Դիոնէս «Одесскій Листокъ» լրագրի մէջ.

Կոնգոի վայրենիները պարտաւորված են ռետին բերել մի արտօնված ընկերութեան համար։ Ռետինը ընդունելու համար նստած է ընկերութեան գործակալը, որ շրջապատված է լինում զինուորներով։ Եթէ զամբիւղի մէջ չը կայ նշանակված քանակութեամբ ռետին (5 կիլոգրամ), վայրենին ստանում է 100 հարուած մի մտրակով, որ չինած է ձիագետի (հիպոպոտամի) կաշուց։ Այն վայրենիները, որոնք նշանակված չափը բերել են, ստանում են մի մի կտոր չիթ կամ ուրիշ մի այդպիսի բան։ Եթէ մի գիւղից, որ ունի 100 մարդ, ռետին բերում են միայն 56 մարդ, դրանք իսկոյն կալանաւորվում են իբրեւ պատանդներ. յետոյ ուղարկվում է մի զօրաբաժին, որ կոտորում է յամառ վայրենիներին, իսկ գիւղը կրակում է։

Վայրենին մարդ է։ Լինում են դէպքեր, երբ վայրենիները չեն ուզում աշխատել իրանց կեղեքողների համար, չը նայած այս վերջինների սպառնալիքներին, պատիժներին։

Այդ ժամանակ, լաւ խրատելու համար, ընտրում են մի քանի գիւղեր։ Պատիժը յանձնվում է մարդակերներից հաւաքած զինուորներին, որոնք ոչ միայն սպանում են «ապստամբներին», այլ եւ այրանդակում են նրանց մարմինները։ «Կեօլնի Լրագրի» մէջ մայոր Ֆիլէր, որ ծառայում էր այդ արտօնված ընկերութեան, մեղադրվում էր այն բանի համար, որ թոյլ է տուել իր մարդակերներին կտրել աւելի քան հազար սպանվածների ձեռքերը։ «Ի՞նչպէս դուք կը զրկէք զինուորներին իրանց յաղթութեան պտուղներից»—պատասխանեց քաջ մայորը։ Լակրուա, «Société Anvertoire» ընկերութեան գործակալը, խոստովանեց, որ ինքը հրամայել է մորթոտել 150 սեւամորթներ եւ թոյլ է տուել կոտրել դիակների ձեռքերը։ Նա խոստովանեց, որ թոյլ է տուել խաչել կանանց եւ երեխաների դիակները եւ ցից հանել տղամարդկանց դիակները «վայրենիներին վախեցնելու համար»։ «Petit Bleu» լրագրի ներկայ տարվայ ապրիլի 26-ի համարում տպագրված են երկու զինուորների վկայութիւններ. դրանք Կոնգոի մէջ ծառայում էին յիշեալ ընկերութեան գործակալ Վայ-Էյկէնի հրամանատարութեան տակ եւ պատմում են, թէ ինչպէս յօրինակ ուրիշների պատժվեցան մի քանի գիւղեր, որոնք հարկեր չէին տալիս։ «Վկայութիւնները հաստատում են, որ գիւղերը շրջապատվեցան, բոլոր տղամարդիկ, կանայք եւ երեխաները սպանվեցին, նրանց դիակները գազանաբար այրանդակվեցին եւ ապա ամեն ինչ կրակի մատնվեց։

Դժբաղդ վայրենիները շատ անգամ չեն դիմանում, ապստամբվում են եւ զէնք են վերցնում իրանց անգութ տէրերի դէմ, կոտորում են իրանց ձեռքն ընկած եւրոպացիներին։ Բայց ինչ օգուտ։ Քաղաքակրթութեան անուանով գործող սպիտակները պատրաստ են լինել աշխարհը իրանց աղաղակներով, թէ քաղաքակրթութիւնը ոտնակոխ է լինում վայրենիների կողմից, թէ լուսաւորութեան, քրիստոնէութեան շահերը պահանջում են կարգի բերել վայրենիներին։ Եւ սպիտակը չէ զլում թէ որքան ստորացնում, ցեխոտում է քաղաքակրթութիւնը իր գազանութիւններով։ Խեղճ սեւամորթ մարդիկ։ Նրանց վրա այդպիսի խժդժութիւններ կատարվում են մի այնպիսի ժամանակ, երբ կենդանիներին անգամ սկսել են պաշտպանել ծեծից ու բռնութիւններից...

ՆԱՄԱԿ ԿԱՂԶՎԱՆԻՑ

—

Հոկտեմբերի 6-ին

Կաղզվանից դէպի հարաւ, 25 վերստի վրա, Բարդող լեռների մէջ գտնվում է «Վարդի-հէր» ուխտատեղին, ուր ուխտ են գնում տարվայ ընթացքում չորս անգամ—Հաւբարձման տօնին կաղզվանցիներն ու շրջակայ գիւղի բնակիչները, Վարդավառի ու Վերափոխման տօնին՝ կարսեցիները, ալէքսանդրոպոլցիները ու կողբեցիները, իսկ Վարագայ Խաչի տօնին՝ յիշեալ բոլոր գաւառների, Շիրակի եւ Բասէնի ժողովուրդը։

Մինչեւ այժմ ուխտատեղիի արդիւնքը ստանում էր Կարսի հոգեւոր կառավարութիւնը, իսկ այս տարվանից՝ բարձր հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ՝ պէտք է ուղարկվի Էջմիածին։

Կարսի յաջորդը պաշտօնական թղթով հրաւիրված լինելով յիշեալ ուխտատեղիի արդիւնքի վրա հսկելու՝ անձամբ ակամատես եղայ ուխտաւորների կրած տանջանքներին թէ ճանապարհին, որ վատ լինելով հանդերձ, վտանգաւոր էլ է, թէ ուխտատեղում։ Ուխտաւորների մեծ մասը, վրան չունենալով, գիշերում է բացօդեայ լեռնային ցրտի մէջ։ Սիրտ կտրատվելու բան է, երբ տեսնում ես անդամալոյծ, վիրաւոր ու ամեն տեսակ ցաւերով բռնվածներին՝ վանքի պատերի տակ կսկսած՝ ցրտից տանջվում են մինչեւ լոյս... Ուխտաւորներից մէկը շատ լաւ նկատեց թէ «միայն փող առնելու մասին էք մտածում, վանքի նորոգութեան եւ ուխտաւորի տեղ կառուցվում են սրբատաշ քարերից անօգուտ, ծիծաղելի հաւաքներ... իրաւունքների, պարտականութիւնների եւ կարգ ու կանոնի կատարեալ բաբելոնեան խառնակութիւն։ Արդի հոգեւոր գործերի դրութիւնը մօտաւորապէս կարելի է արտայայտել ժողովրդի ասացուածքով. «Անչուն չէն, անմահակ տուն»... ով ինչ ուզում է՝ անում է, ոչ վախ կայ, ոչ պատկառանք, ոչ պարտաճանաչութիւն։ Մեր կարծիքով, կենտրօնը, Էջմիածինը, չը պէտք է խրախուսի խառնակիչների նենգ ինտրիգները, նա պէտք է պատշաճաւոր կերպով սանձահարէ այդպիսի մարդկանց։ Էջմիածինը, իբրեւ կենտրոնական մի բարձր վարչութիւն, ընդհանրապէս պէտք է կառավարէ այլ եւ այլ տեղերում ծագող մանր ընտանեկան գործերը, բայց ոչ թէ իջնէ իր բարձրութիւնից, վերահսկող դիրքից, իբրեւ հետաքրքրված կողմ կռւի մէջ մտնէ, խրվելով ամբողջապէս մանրամասնութիւնների մէջ, հակվելով այս կամ այն կողմը, երերվելով, անդադար փոխելով իր վճիռները։ Եթէ Էջմիածինը ամեն մի մանր գործում չը խառնվէր, չէին խրախուսվի նրանք, որոնց ձեռնտու է «պղտորած» ջուրը։ Սրանք տեսնում են, որ գրեթէ միշտ աջողութիւն են ունենում իրանց ինտրիգները, տեսնում են, որ Էջմիածինը իսկոյն սկսում է in corpore հետաքրքրվել մի որ եւ է տիրացուի անձնաւորութեամբ, երբ ծագում է նրան տեղաւորելու հարցը, եւ ահա այդ չար մարդիկ էլ աւել քաջալերվելով ս. Էջմիածնի ուշադրութեամբ, կրկնակի եռանդով, առանց կարմրելու շարունակում են իրանց ազգաւեր գործերը... Ինչ կը լինի սրա վերջը, Աստուծուն է միայն յայտնի...

Մասնաւորելով մեր խօսքը եւ դառնալով

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳՈՐԾԵՐԻՑ

—

Ցաւ է մեզ խոստովանել, որ երկարամեայ դիտողութիւններից յետոյ, մենք եկանք այն եզրակացութեան, որ Նոր-Նախիջեւանի արդի ինտելիգենցիան, խմորվելով եւական միջավայրի հետ, շատ քիչ է տարբերվում հոգեպէս վերջինից եւ գրեթէ ոչ մի լուրջ, բարերար ազդեցութիւն չէ ունեցել եւ չունի այժմ նրա վրա։ Մենք չենք պատահել, որ Նոր-Նախիջեւանցի ինտելիգենտը ասպարէզ գայ հասարակական գործիչի դերում եւ ղեկավարվի սկզբունքով... Սկզբունքը, երբ տեսնէք խոշոր տառերով գրված նրա դրօշակին, լոկ դիմակ է եւ այդ դիմակի տակ այս գործիչը այն գործիչի հետ իր անձնական հաշիւներն է տեսնում։ Ցանկալի բացառութիւնները հազւագիւտ են վերին աստիճան։ Եթէ հարցը, դիցուք, վերաբերում է ընդհանուր կամ Կովկասի հայութեան, երբէք նա չէ կարող հետաքրքրել նախիջեւանցի ինտելիգենտին։ Փորձեցէք նրա ուշքը դարձնել մի ընդհանուր, կենսական երեւոյթի վրա, որ կատարվում է Նախիջեւանի չինական պատերից դուրս եւ դուք իսկոյն կը նկատէք նրա դէմքին յոգնածութեան նշաններ, նա կը յօրանջի լայն բերանով եւ կասի. «աղբար, վազեկուր, դրսի վայրոս է, ու, դուսեցիները թող զանիմատսա ըլան...»։ Ինչու. որովհետեւ նեղ շահ չը կայ, որ կարող է միայն ցնցել նախիջեւանցու պաղած նեարդերը, որովհետեւ չը կայ այնտեղ անձնական թշնամի, որին կարելի լինի «նագադիտ» անել, գրաւած դիրքից վանել ու նրա տեղը բռնել...։

Ահա ինչու նա միանգամայն սառնասիրտ աչքով է նայում մի խոշոր երեւոյթի վրա, մի քրոնիքական հիւանդութեան, որ վարակելով կովկասեան բոլոր հիմնարկութիւնները, 90 տոկոսը նրանցից մահվան ենթարկելով, այժմ մուտք է գործում եւ այստեղ աննկատելի, բայց հաստատ քայլերով...

Անտարբերութեամբ ենք բացատրում այն հանգամանքը, որ վերջին ժամանակները մէկը միւսին յաջորդում են, բազմելով այստեղ յաջորդութեան աթոռին, անընդունակ, անկամք եւ անգոյն հոգեւորականներ, կամ նենգ, յայտնի ուղղութեան պատկանող ինտրիգան մարդիկ։ Իսկ Նոր-Նախիջեւանի յաջորդի պաշտօնը կարեւոր պաշտօն է։ Լայն աշխարհահայեցողութեան տէր աչալուրջ հոգեւորականը այստեղ շատ գործեր եւ բարի գործեր կարող էր կատարել։ Բայց հոգեւոր կենտրօնը, դժբաղդաբար, լուրջ ուշադրութիւն չէ դարձնում մինչեւ այժմ այս յաջորդութեան վրա, այլ ուղարկում է հովուելու այս բազմահայ, հոգեւոր մխիթարութեան կարօտ շրջանը անընդունակ եւ, որ աւելի վատ է, ինտրիգան մարդկանց, մինչդեռ կան աւելի հմայապատասխան արժանաւոր վարդապետներ, որոնց կարելի էր փորձի համար գոնէ ուղարկել եւ տեսնել, թէ որքան կը բարձրանար հոգեւորականի պրէստիժը, որ միանգամայն ընկած է գաղութներում։

Օր-օրի վրա ներկայումս սունկի նման բուսնում են եւ ցրվում ամեն կողմ ինտրիգան հոգեւորականներ։ Եւ գրանց բազմանալը մենք վերագրում ենք այն հանգամանքին, որ հայ հոգեւորականութեան իրաւասութեան տակ մնացել են այժմ մի քանի հիմնարկութիւններ։ Այդ մի երկու հաստատութիւնների վրա կենտրօնացրել են իրանց ամբողջ ուշադրութիւնը մեր բոլոր հոգեւորականները—փոքրից մինչեւ մեծը։ Սրանք բոլորն էլ բուռն կերպով ուզում են դեր խաղալ, ազդեցութիւն ունենալ այդ հաստատութիւնները կառավարելու գործում։ Վերցնենք, օրինակի համար, Երեւանի, Ղարաբաղի դպրոցները։ Ահագին լէգէօններ հոգեւորականների օր ու գիշեր քրտինք էին թափում, թղթեր մրոտում, գանգատներ շարադրում եւ այլն եւ այլն, միմիայն այդ երկու թշուառ բեկորների շուրջը ժողովված, որպէս զի կամ իրանք տիրանան այդ փլատակներին կամ բնակեցնեն այնտեղ իրանց արբանեակներին։ Մի որ եւ է աշակերտի, ուսուցչի արձակվելը կամ ընդունվելը դպրոցում ստանում է, չնորհիւ այս եւ այն հոգեւորականի ջանքերի, ընդհանուր նշանակութիւն, բարձրանում է անասելի աղմուկ։ Իսկ մեր բարձրագոյն ուսում ստացած երիտասարդ վարդապետները, փոխանակ բարերար ազդեցութիւն ունենալու հիների վրա, իրանք վերջիններից աւելի թունդ «զալմազաներ են» սարքում եւ զբաղեցնում կենտրօնը աննչան, մանր հարցերով։ Կենտրօնը, կամայ-ակամայ, ստիպվում է այդ կորստաբեր հոսանքից, զբաղվելով օրն ի բուն մի տիրացուի, մի աշակերտի, մի վերակացուի գործով, մինչդեռ խոշոր, ընդհանուր, հրատապ խնդիրները մնում են բարձի թողի արված, մատնվում անուշադրութեան, մահանում—սպանվում... Մի ուսուցչի անձնաւորութեան, քմահաճոյքին զոհ է բերվում ամբողջ հաստատութեան բախտն ու ապագան...

Ցաւալի երեւոյթ. թոնիր կամ հաւաբուն չինելու համար քանդվում է մի հոյակապ շէնք, որի տեղ կառուցվում են սրբատաշ քարերից անօգուտ, ծիծաղելի հաւաքներ... իրաւունքների, պարտականութիւնների եւ կարգ ու կանոնի կատարեալ բաբելոնեան խառնակութիւն։ Արդի հոգեւոր գործերի դրութիւնը մօտաւորապէս կարելի է արտայայտել ժողովրդի ասացուածքով. «Անչուն չէն, անմահակ տուն»... ով ինչ ուզում է՝ անում է, ոչ վախ կայ, ոչ պատկառանք, ոչ պարտաճանաչութիւն։ Մեր կարծիքով, կենտրօնը, Էջմիածինը, չը պէտք է խրախուսի խառնակիչների նենգ ինտրիգները, նա պէտք է պատշաճաւոր կերպով սանձահարէ այդպիսի մարդկանց։ Էջմիածինը, իբրեւ կենտրոնական մի բարձր վարչութիւն, ընդհանրապէս պէտք է կառավարէ այլ եւ այլ տեղերում ծագող մանր ընտանեկան գործերը, բայց ոչ թէ իջնէ իր բարձրութիւնից, վերահսկող դիրքից, իբրեւ հետաքրքրված կողմ կռւի մէջ մտնէ, խրվելով ամբողջապէս մանրամասնութիւնների մէջ, հակվելով այս կամ այն կողմը, երերվելով, անդադար փոխելով իր վճիռները։ Եթէ Էջմիածինը ամեն մի մանր գործում չը խառնվէր, չէին խրախուսվի նրանք, որոնց ձեռնտու է «պղտորած» ջուրը։ Սրանք տեսնում են, որ գրեթէ միշտ աջողութիւն են ունենում իրանց ինտրիգները, տեսնում են, որ Էջմիածինը իսկոյն սկսում է in corpore հետաքրքրվել մի որ եւ է տիրացուի անձնաւորութեամբ, երբ ծագում է նրան տեղաւորելու հարցը, եւ ահա այդ չար մարդիկ էլ աւել քաջալերվելով ս. Էջմիածնի ուշադրութեամբ, կրկնակի եռանդով, առանց կարմրելու շարունակում են իրանց ազգաւեր գործերը... Ինչ կը լինի սրա վերջը, Աստուծուն է միայն յայտնի...

Մասնաւորելով մեր խօսքը եւ դառնալով

ուորների մասին երբէք, էլ ինչ սրտով աջահաջողոյր տանք»։ Եւ իրաւ, վանքի հարաւային պատը, որի մէջ պահուած են մասունքները, բոլորովին քայքայվել է ու դուռ էլ չունի, ուստի շատ անգամ մօտիկ բնակվող քրդերից եւ նրանց անասուններից անարգվում է սրբավայրը։ Ուխտատեղին տարին մի քանի հարիւր ռուբլի մուտք ունենալով հանդերձ՝ երկու աչքից բաղկացած մի չինովնիկ չունի, որ գոնէ հիւանդոտ ուխտաւորները պատսպարվեն ցրտից ու փոթորիկներից, որ յատուկ է այնտեղ նոյն իսկ ամառ ժամանակ։

Այս անգամին ուխտաւորների թիւը սովորականից պակաս էր, տեղացող անձրեւների պատճառով. այնու ամենայնիւ՝ 89 ր. 70 կոպէկ մուտք եղաւ, որից ընդհանուր ծախսը—վանահօրը ռոճիկ, մոմի գին, ճանապարհածախս դուրս գալով՝ զուտ արդիւնք մնաց 60 ր. 31 կոպէկ, որը ներկայացվեց Կարսի յաջորդին։ Ի դէպ. ուխտատեղիի սեփական հողերը աճուրդով տրված են մի մասնաւոր մարդու, վերջինս էլ՝ մի որոշ գումար օգուտ ստանալով՝ տալիս է քրդերին, ուստի ցանկալի է, որ վանահայրը ինքը անմիջապէս գործ ունենայ քրդերի հետ, որպէս զի բոլոր օգուտը վանքը ստանայ։ Այս տարի կարծեմ լրանում է աճուրդի ժամանակամիջոցը։

Մ. Ղազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սղնախ, սեպտեմբերի 28-ին

Հաճեցէք, խնդրեմ, տեղ տալ «Մշակում» հետեւեալ երկտողիս.

Ցանկանալով Տիբասանի գիւղում հիմնել հայոց եկեղեցի, որի բացակայութեան պատճառով այդ գիւղի, նոյնպէս եւ մերձակայ գիւղերի վրացախօս հայ գիւղացիները (թւով մօտ 70 ընտանիք) շեղվել են իրանց մայրենի հաւատից եւ համարեա թէ ձուլված են տեղացիների հետ, ես ձեռնամուխ եղայ գործին, յուսալով, որ մեր հասարակութեան մէջ կը գտնվեն շատերը, որոնք կաջակցեն ինձ։ Իմ խնդրի հաջաձայն, երկրաչափ Զ. Գէորգեան կազմեց կառուցվելի եկեղեցու պլանը ձրիաբար, որի համար յայտնում եմ նրան իմ խորին շնորհակալութիւնը։ Այդ պլանը ես առաջարկեցի հոգեւոր իշխանութեան՝ գործին ընթացք տալու, որը իր կողմից առաջարկել էր պ. Նահանգապետին հաստատելու համար։ Այժմ Թիֆլիսի Նահանգական վարչութեան շինարարական բաժինը, մի քանի թերութիւններ նկատելով պլանում, յետ է դարձրել պլանը, պահանջելով վերակազմել այդ պլանը եւ նորից առաջարկել, ներկայացնելով եւ տեխնիկական հաշիւը, որ առաջ ներկայացրած չէր։ Պ. Գէորգեանը անկարող լինելով այս գործը կատարել, ես չունեմ ծանօթ, որին կարողանայի այս գործը յանձնել, իսկ վարձատրութիւն տալ պլանը կազմելու համար չեմ կարող, որովհետեւ գիւղացիներն աղքատ են եւ եկեղեցին ժողովարարութեամբ պէտք է կառուցվի։

Ուստի ձեր լրագրի միջոցով դիմում եմ յարգելի հայ ինժենէրներին, որոնց համար թանգ են հայոց եկեղեցու շահերը, խոնարհաբար խնդրելով, որ նրանցից մէկը օգնէ ինձ՝ վերակազմելով եկեղեցու պլանը եւ տեխնիկական հաշիւը կազմելով։ Եկեղեցին պէտք է լինի քարաշէն. ամբողջ ծախսը պէտք է լինի 2000 ռուբլի։ Հասցէս. Сигнахъ, священнику Григорію Матинянцъ.

Գրիգոր քահ. Մատինեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 10-ին Բօրժոմից ժամանեց Թիֆլիս Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգի Միխայլովիչ եւ իշաւ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչի պալատը։

—

Երէկ, հինգշաբթի, հոկտեմբերի 12-ին, երեկոյեան, Ներսիսեան դպրոցի շինութեան մէջ տեղի ունեցաւ դպրոցի նոր հոգաբարձութեան ընտրութիւնը։ Ժողովին ժամանակցում էին 60 եկեղեցական պատգամաւոր։ Նախագահում էր Թիֆլիսի թեմի առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան։ Ժողովի սկիզբը նշանակված էր երեկոյեան 7 ժամին, բայց կարելի եղաւ զբաղմունքները սկսել միայն 7¾ ժամին։ Նիստը սկսվելուց յետոյ պատգամաւոր Բ. Վարդանեան խօսք խնդրեց եւ յայտնեց հետեւեալը. դպրոցը մինչեւ այժմ կառավարվում էր մի կանոնադրութեամբ, որ անփոփոխ գործում է 1861 թւականից։ Այդ կանոնադրութեամբ մօտ քառասուն տարվայ ընթացքում դպրոցը կառավարել է իր գործերը։ Սակայն այսօր, քառասուն տարի անցնելուց յետոյ, այդ կանոնադրութիւնը ենթարկվել է փոփոխութեան։ Մենք պատգամաւորներս իբրեւ Թիֆլիսի հայ ազգաբնակութեան ներկայացուցիչներ խնդրում ենք մեր կողմից յայտնել Նորին Վեհափառութեան մեր խնդիրքը վերականգնելու հին կարգը եւ պահպանելու չորս տասնեակ տարվայ գոյութիւն ունեցող կանոնադրութիւնը։ Առաջնորդը յայտնեց, որ յարուցած հարցը ներկայ ժողովի պարապմունքներին չէ վերաբերում։ Այնուհետեւ ժողովը ձեռնարկեց ընտրութեան։ Զայների մեծամասնութեամբ ընտրվեցին հոգաբարձուներ հետեւեալ վեց անձինք՝ Ամիրխանեան Յովսէփ, Ալիխանեան Յովհաննէս, Բեհրութեան իշխան Արսէն, Մելիք-Ազարեան Ալէքսանդր, բժ. Ստեփանեան Կարապետ եւ Տիգրանեան Յովսէփ։ Փոխանորդներ. Բաբեան Արշակ, Բաբախանեան Առաքել, Բարխուդարեան Արշակ, Բուղդանեան Իսահակ, Վարդանեան Բարսեղ եւ Քօչարեան Կարապետ։ Ժողովը փակվեց ժամի 10½-ին։

—

Շուտ չի մոռացվի Նորին մեծութիւն պարսից Շահի Բագուի այցելութիւնը, ասում է «Нов. Обозрѣніе» լրագիրը։ Շահի եւ նրա սվիտայի համար պատրաստված էր քաղաքի ամենալաւ շինութիւններից մէկը—Թումանեանց եղբայրների տունը, Նիկոլաեւսկայա փողոցի վրա, Միխայլովսկի այգու դէմ։ Երրորդ յարկի պատշգամբից, ուր գտնվում էին Նորին մեծութեան սենեակները, բացվում է հրաշալի տեսարան քաղաքի եւ Բագուի նաւակայարանի վրա։ Բարձր հիւրի համար պատրաստված էին 42 սենեակներ։ Նորին մեծութիւնը գրաւած ունէր ննջարան, առանձնասենեակ եւ հիւրընդունարան։ Նոյն յարկում գտնվում էին սադրազամի եւ բոլոր մինիստրների սենեակները։ Գեներալ ադիւտանտ Արաէնով, Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա-Ռիզա խանը եւ մնացած սվիտան իջեւանեցին տան առաջին յարկում։ Սանդուղքի վերին աստիճանի վրա Շահին դիմաւորեցին տանտէրերը։ Շահը իր գոհունակութիւնը յայտնեց նրանց։ Հետեւեալ օրը Շահը շնորհեց Թումանեանց եղբայրների առեւտրական տան գլուխ Սարգիս Թումանեանցին I-ին աստիճանի Առիւծի եւ Արեգակի շքանշանը այն պայմանով, որ այդ շքանշանը ժառանգաբար անցնէ առեւտրական տան գլխին։ Հոկտեմբերի 6-ին երեկոյեան, Շահը, թեթեւ հիւանդութեան պատճառով, չը կարողացաւ ներկայ լինել թատրոնում։ Ճաշից յետոյ Նորին մեծութիւնը պահանջեց տեղական հայ-երաժիշտներին (սազանդարներին), որոնց մէկ ժամից աւելի ականջ դրեց եւ ապա առատօրէն վարձատրեց։ Զահանդէսը, որ կազմել էին դպրոցների աշակերտները, մեծ գոհունակութիւն պատճառեց Նորին մեծութեանը, որը խնդրեց փոխ-նահանգապետ Լիլիէնվից՝ շնորհակալութիւն յայտնել աշակերտներին։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւնը 1,240,000 ռուբլի է նշանակել գիւղատնտեսական դպրոցների պահպանութեան համար առաջիկայ 1901 թւի ընթացքում։ Այս տարվայ ընթացքում մինիստրութիւնը ծախսել է նոյն դպրոցների վրա 1,157,000 ռուբլի։

—

Աչքի առաջ ունենալով, որ չուտով Ռուսաստանում կը մայնվի մետրական չափերի գործածութիւնը՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը առաջարկել է բոլոր դպրոցական հաստատութիւնների վարչութիւններին ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրա եւ առաջուց ծանօթացնել աշակերտներին մետրական չափերի հետ։

—

Կենդանիների հովանաւորութեան ռուսական ընկերութիւնը մօտ օրերումս թոյլատրութիւն է ստացել կպցնել տների վրա, երեւացող տեղերում, տախտակներ հետեւեալ մակագրութեամբ. «Կարեկցաբար վարուեցէք կենդանիների հետ, երանի նրան, ով ողորմած կը լինի եւ դէպի անասունները»։

—

Պետերբուրգում, ինչպէս հաղորդում են լրագիրները, շուտով իր գործունէութիւնը կը սկսէ մի հասարակական ընկերութիւն, որի նպատակն է ամեն կերպ աջակցութիւն ցոյց տալ գիւտեր անող անձանց։

—

1902 թւին լրանում է Ռուսաստանում մինիստրութիւններ եւ մինիստրական կոմիտէտ հիմնելու 100-ամեակը։ Ի նկատի առնելով այս հանգամանքը՝ այժմեանից պատրաստութիւններ են տեսնվում այդ նշանաւոր տարեդարձը արժանաւոր կերպով տօնելու։ Զինուորական մինիստրութիւնը որոշել է այդ տօնի առիթով, ի միջի այլոց, կազմել մինիստրութեան 100-ամեայ գոյութեան պատմութիւնը։

—

Պայքարը ռուսական եւ ամերիկական կերոսինի մէջ, ինչպէս հաղորդում է «Zeitschrift für angewandte Chimie», ներկայումս չափազանց սուր կերպարանք է առնում գերմանական, անգլիական եւ չինական վաճառականներում։ Ռուսաստանը մեծ ջանքեր է գործ դրել կերոսինի արտահանութիւնը զարգացնելու համար եւ այդ ջանքերի հետեւանքն եղել է այն, որ ռուսական կերոսինը այժմ աւելի եւ աւելի տարածվում է Անգլիայում եւ Գերմանիայում ի վնաս ամերիկականի։ Թէպէտ հիմա էլ Գերմանիան ստանում է Ամերիկայից մի քանի անգամ աւելի կերոսին (85%, քան Ռուսաստանից (15%), բայց պէտք է ի նկատի ունենալ, որ 1897 թւից սկսած ռուսական կերոսինի արտահանութիւնը դէպի Գերմանիա եռապատկվել է։ Իսկ Անգլիայում, չը նայելով որ ծովային տեղափոխութեան բոլոր յարմարութիւնները ամերիկացիների կողմն են, այնուամենայնիւ ռուսական կերոսինը տարածվում է այնպիսի արագութեամբ, որ այժմ նրա քանակութիւնը հաւասար է ամերիկական կերոսինի քանակութեանը։ Բոլորովին այլ երեւոյթ է տեղի ունենում Չինաստանում։ Այնտեղ ամերիկական կերոսինի ներմուծումը աճում է ի վնաս ռուսականի։ Անցեալ տարվայ առաջին կիսում Ռուսաստանը ներմուծել է Չինաստան 5½ միլիոն արկղ կերոսին, Ամերիկան—4½ միլիոն, այն ինչ այս տարվայ մի եւ նոյն ժամանակամիջոցում Ռուսաստանը ներմուծել է միայն 3½ միլիոն արկղ, իսկ Ամերիկան 6 միլիոնից աւելի։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 8-ին, ս. Աստուածածնի եկեղեցում, հանդիսաւոր պատարագից յետոյ, տեղի ունեցաւ Կ. Պոլսում վախճանված տիկին Գայիանէ Մատակեան-Մանդակունու հոգեհանգիստը, որ կատարվեց հանգուցեալի տագեր-ամուսին տիկին Թագուհի Մատակեան-Մանդակունու եւ միւս ազգականների ցանկութեամբ։ Հոգեհանգստին ներկայ էին եւ մեր ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Հանգուցեալի մօտ ազգասակ առաջարկութեան, խնդիրքի ձեւ, իսկ յետոյ բացարձակ հրամանի ձեւ։ Վերակացուին ստիպված ընդունում են նորից։ Վերակացուն կրկին ստանձնում է պաշտօնը, ծիծաղում ժանկավարժական ժողովի, հոգաբարձուների վրա եւ... իրաւունք չունի միթէ ամենահզոր վերակացուն, մի բաղդաւոր ինվալիդ, որի ապրուստի համար զոհ են բերվում ուսուցիչները, հոգաբարձուները, աշակերտները եւ ամբողջ հիմնարկութեան պատիւը։ Դա դեռ բաւական չէ. ինվալիդի համար դպրոցի կանոնադրութիւնը կարեւոր եւ հիմնական փոփոխութեան է ենթարկվում։ Որքան զոհեր մի աննշան անհատի հաճոյքը կատարելու համար։ Երեւակայեցէք, մինչեւ անգամ նոր օրէնք են հրատարակում ad hoc. ուսուցիչ արձակելու եւ ընդունելու հարցը, կանոնադրութեան հիման վրա, վճռվում էր առաջ ձայների բազմութեամբ, այժմ, ի փառս ազգի եւ ինվալիդի, հրամայվում է վճռել այդ հարցը ոչ թէ ձայների բազմութեամբ, այլ միաձայն...

Ներելի՞ է դա մի վարչական կենտրոնի համար. արդեօք իրաւունք չունեն վիրաւորված հոգաբարձուները հրաժարական տալ, առարկելով, որ այսպիսի երերուն դրութեան մէջ անկարելի է բարեխղճօրէն գործ կատարել...։ Սուրբ հայրեր, մի մանրանաք այդքան, մի վհատեցնէք ձեզ յանձնած հօտը։ Ձեր բռնած դիրքը վտանգալից է. դուք պատասխանատու էք պատմութեան առաջ եւ սա գիտէ պատժել մեղաւորներին։ Դուք ունէք շատ կարեւոր գործեր, կենսական խնդիրներ, նրանցով զբաղվեցէք, ապա թէ ոչ անդառնալի կերպով ամեն բան կը կորցնէք...

Ջաւադ-բէկ Բալուղեան

այն դէպքին, որ առիթ տուեց մեզ այս տողերը գրելու, կրկնում ենք, վերեւում մատնանիշ արած հիւանդութիւնը սկսում է վարակել եւ այս կողմերի հոգեւոր գործերը։ Թող ներվի մեզ ասել, որ էջմիածինը յաճախ մոռանում է այն ակնյայտնի հանգամանքը, որ անցան-գնացին անդառնալի հին ժամանակները, երբ մելիքը քիւրսու տակ նստած կամ իր տան կտուրին, թիկն տուած միթաքայի վրա՝ քննում էր իր հպատակների բոլոր մանր վէճերը, խառնվում էր նրանց ամենաանմեղ թիւրիմացութիւնների մէջ, առանց օրէնքի, իր քէֆին համեմատ վճիռներ արձակում եւ այլն... Այժմ օրէնքների դարեշրջան է, առանց պարզ ու հաստատուն օրէնքի անհատին քայլ չէ կարելի անել, ուր մնաց ժողովուրդ, հօտ կառավարել։ Բացի այդ, այժմ իրաւունքների եւ իրաւասութեան անխախտ բաժանման դար է. կենտրոնը իր յայտնի իրաւունքները ու պարտականութիւններն ունի եւ չը պէտք է խառնվի տեղական վարչութիւնների կարգադրութիւնների մէջ, եթէ այդ կարգադրութիւնները վերապահված են օրէնքով տեղական մարմիններին եւ չեն չշոշափում կենտրոնի իրաւասութեան շրջանը։ Կարճ ասած, իրաւունքների եւ իրաւասութեան նահապետական խառնուփնթոր դրութիւնը անհետացել է այժմ լուսաւոր երկիրներում, իսկ մեզ մօտ, ընդհակառակը, դեռ շարունակում է թագաւորել. նորանոր ապացոյցներ տալով իր անապառ կենսունակութեան մասին։ Ահա չարիքի բուն պատճառը, արմատը։ Եթէ մենք խորը թափանցենք վերջին խառնակութիւնների մէջ, որոնք տեղի ունեցան Ղարաբաղի եւ Երեւանի թեմերում, կը գանք անկասկած այն եզրակացութեան, որ այդ բոլորը արդիւնք է նոյն հանգամանքի. չեն ճանաչում եւ չեն էլ ուզում ճանաչել իրանց իրաւունքները ու պարտականութիւնները ոչ կենտրոնը, ոչ կոնսիստորիան, ոչ առաջնորդը, ոչ յաջորդը, ոչ դպրանոցի տեսուչն ու ուսուցիչը եւ ոչ նոյն իսկ աշակերտը... Մէկը միւսի գործում խառնվում է, միւսի կարգադրութիւնը փոխում, նոր, սեփական հրաման արձակում, յետոյ էլի նոր հրաման, երբ նոր «հաւայ» է փչում... եւ այդպէս անվերջ... եւ այդ բոլորը պատած բազմատեսակ ինտրիգների թանձր փոշիով։—Ո՞վ է այստեղ գլխաւոր մեղաւորը, դժուար է ասել. ամենքն էլ մեղաւոր են, ամենքն էլ զոհ են կարգ ու կանոնի բացակայութեան,—բայց ո՞ր չափով եւ ո՞ր աստիճան։

Եւ այսպէս, չնորհիւ այդ դրութեան, որ տեւում է բաւական երկար տարիներ, ստեղծվեց մի ատուար բազմութիւն երիտասարդ հոգեւորականների եւ աշխարհականների, որոնք ոտից գլուխ մնված ու կրթված լինելով ինտրիգների մթնոլորտում, ներկայացնում են մի առանձին, բացառական տիպ։ Այդ մարդկանց կարելի է անխիալ եւ անվրէպ ջոկել հէնց առաջին անգամից, փողոցում նոյն իսկ։ Նրանց դէմքից, դէմքի մռայլ եւ չար արտայայտութիւնից, քայլուածքից, ձայնից փչում է ինտրիգների վատ հոտ, զզուանք է բերում մարդու վրա։ Ի՞նչ կերպ եւ ի՞նչ կազմի հասարակութիւնը այդ նոր տիպերից, դժուար է ասել, որովհետեւ դժուար է ասել, թէ մինչեւ ի՞նչ կը շարունակվի այժմեան խառնակ դրութիւնը, որ, հնոցի պէս, շարունակ եւ անդադար նորերն է թիւում։ Շնորհիւ այդ նոր թրխածներից մէկի, Նոր-Նախիջեւանի թեմական դպրանոցը, որ բախտի բերմամբ, հրաշքով, ազատ էր մնացել վարակումից, այժմ, դժբաղդաբար, դառնում է ասպարէզ ինտրիգների։

Ամենալաւ տեղական ինտելիգենտ եւ թարմ ուժերից է կազմված դպրանոցի նորընտիր հոգաբարձութիւնը, որ անկեղծ եւ անշահասէր կերպով նուիրվել է իր ստանձնած պաշտօնին։ Ուսուցչական խումբը, գրեթէ ամբողջապէս բաղկացած է բարձրագոյն ուսման տէր մարդկանցից։ Հոգաբարձական խորհուրդը եւ մանկավարժական ժողովը ձեռք-ձեռքի տուած, ղեկավարվելով դպրոցի կանոնադրութեամբ, սկսեցին ուսումնական տարին մի շարք բարեփոխումներով, որոնք ունէին բուն տնային, ներքին դրոյթ, յամենայն դէպս ոչ մի կերպ չէին կարող վերաբերվել հոգեւոր վարչութեան կենտրոնին կամ չշոշափել վերջինիս իրաւասութիւնը։ Ի միջի այլոց, հիմնվելով մանկավարժական ժողովի զեկուցման վրա՝ հոգաբարձական խորհուրդը արձակեց պաշտօնից, իբրեւ ինվալիդի, մի ինչ որ վերակացու։ Այդպէս վարվելով՝ խորհուրդը չէ մոռանում եւ իր բարոյական պարտականութիւնը, տալիս է արձակվածին նպաստ միանուագ, որ անպայման ընդունում է նախկին վերակացուն։ Այստեղ թէ մանկավարժական ժողովը եւ թէ խորհուրդը մի թիզ անգամ չեն շեղվել կանոնադրութեամբ իրանց վերապահված իրաւունքներից եւ ղեկավարել են միմիայն դպրոցը բարեկարգելու փափագով։

Բայց ինչ ենք տեսնում։ Խուցերում իսկոյն սկսում են խզբզալ գրիչներ եւ կենտրոն են թռչում ծրար ծրարի եռեւից։ Կենտրոնը, կրկին անգամ մոռանալով իր բարձր կոչումը, հրապուրվում է եւ իջնում ցած, դէպի այն վայրը, ուր վայել չէ նրան ոտք կոխել... Ընչին վերակացուն դառնում է կենտրոնի առանձին հոգատարութեան բաղդաւոր առարկան։ Կենտրոնը առաջ իր միջամտութեան տալիս է մի տեսակ առաջարկութեան, խնդիրքի ձեւ, իսկ յետոյ բացարձակ հրամանի ձեւ։ Վերակացուին ստիպված ընդունում են նորից։ Վերակացուն կրկին ստանձնում է պաշտօնը, ծիծաղում ժանկավարժական ժողովի, հոգաբարձուների վրա եւ... իրաւունք չունի՞ միթէ ամենահզոր վերակացուն, մի բաղդաւոր ինվալիդ, որի ապրուստի համար զոհ են բերվում ուսուցիչները, հոգաբարձուները, աշակերտները եւ ամբողջ հիմնարկութեան պատիւը։ Դա դեռ բաւական չէ. ինվալիդի համար դպրոցի կանոնադրութիւնը կարեւոր եւ հիմնական փոփոխութեան է ենթարկվում։ Որքան զոհեր մի աննշան անհատի հաճոյքը կատարելու համար։ Երեւակայեցէք, մինչեւ անգամ նոր օրէնք են հրատարակում ad hoc. ուսուցիչ արձակելու եւ ընդունելու հարցը, կանոնադրութեան հիման վրա, վճռվում էր առաջ ձայների բազմութեամբ, այժմ, ի փառս ազգի եւ ինվալիդի, հրամայվում է վճռել այդ հարցը ոչ թէ ձայների բազմութեամբ, այլ միաձայն...

Ներելի՞ է դա մի վարչական կենտրոնի համար. արդեօք իրաւունք չունեն վիրաւորված հոգաբարձուները հրաժարական տալ, առարկելով, որ այսպիսի երերուն դրութեան մէջ անկարելի է բարեխղճօրէն գործ կատարել...։ Սուրբ հայրեր, մի մանրանաք այդքան, մի վհատեցնէք ձեզ յանձնած հօտը։ Ձեր բռնած դիրքը վտանգալից է. դուք պատասխանատու էք պատմութեան առաջ եւ սա գիտէ պատժել մեղաւորներին։ Դուք ունէք շատ կարեւոր գործեր, կենսական խնդիրներ, նրանցով զբաղվեցէք, ապա թէ ոչ անդառնալի կերպով ամեն բան կը կորցնէք...

Ջաւադ-բէկ Բալուղեան

կանները պահում են նրա մասին շատ քաղցր յիշողութիւններ, որոնք ապացուցանում են, թէ որքան բարի, ազնիւ ու համակրելի է եղել հայ գործիչ-կինը նաեւ իր առօրեայ կեանքի մէջ, երբ ինքը շրջապատված է եղել հին հասկացողութիւններով եւ հայեացքներով ծնված ու մեծացած մարդկանցով... Հանդիսաւոր հոգեհանգստից յետոյ, ուսուցիչ պ. Ց. Կոստանեան մի ճառ խօսեց, գրուատելով հանգուցեալի նըշանակութիւնը մանկավարժական եւ գրական ասպարէզներում եւ ցանկանալով հայ ընտանիքին նորանոր տիկին Մատակեաններ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

—

Անգլիական լրագիրները արդէն լիակատար տեղեկութիւններ են հաղորդում պարլամենտական վերջին ընտրութիւնների մասին։ Կառավարութեան կողմնակիցներից ընտրված են 401, իսկ դիմադրական կուսակցութիւնից— 269 հոգի։ Կառավարչական մեծամասնութիւնը կազմվեց 334 պահպանողականներից եւ 67 ազատամիտ-ունիոնիստներից, իսկ դիմադրական կուսակցութեան վիճակված 268 տեղերից 186-ը ընկաւ ազատամիտներին, 73-ը—հակապարնէլիստ իրլանդացիներին, 9-ը—պարնէլիստներին եւ 1-ը—անկախ բանուորական կուսակցութեան թեկնածուին։ Այսպիսով կառավարչական ձայները 214-ով գերակշիռ են ազատամիտների ձայներից, իսկ դիմադրական կուսակցութեան բոլոր ձայներից գերակշիռ են 132-ով։

Պարլամենտի արձակումից առաջ կառավարչական մեծամասնութիւնը հաւասար էր 128 ձայների, այսինքն չորս ձայնով աւելի քիչ էր քան հիմա։ Դիմադրական կուսակցութեան այժմեան դրութիւնը՝ համեմատելով այն դրութեան հետ, որի մէջ գտնվում էր նա 1895 թւի ընտրութիւններից յետոյ, փոխված է դէպի լաւը։ Հինգ տարի առաջ պահպանողականների մեծամասնութիւնը համայնքների ժողովում հաւասար էր 152 ձայների, այն ինչ այժմ նա 20-ով պակաս է։ Այս հետեւանքը ստացվեց հետեւեալ կերպով. Իրլանդիայում եւ Լօնդօնում թէ պահպանողականները եւ թէ ազատամիտները պահեցին իրանց տեղերի նախկին քանակութիւնը. Վալիսում եւ անգլիական գիւղական շրջաններում աւելի տեղ ձեռք բերին, քան ունէին առաջ ազատամիտները, իսկ Շոտլանդիայում եւ անգլիական քաղաքային շրջաններում աւելի տեղ ձեռք բերին պահպանողականները։

Հետաքրքրական է համեմատել միմեանց հետ ձայների այն ընդհանուր քանակութիւնը, որ տուած է ընտրողների կողմից յօգուտ երկու կուսակցութեան թեկնածուների։ Ուղիղ է, այդ համեմատութիւնը չէ կարող անպայման ճիշդ լինել, որովհետեւ շատ շրջաններում ընտրողներին առաջարկված էր թեկնածու միայն մի կուսակցութեան կողմից, այսու ամենայնիւ այդ համեմատութիւնը պարզապէս ցոյց է տալիս անգլիական ընտրողական սիստեմի թերութիւնները։ Ամբողջ Մեծ-Բրիտանիայում (առանց Իրլանդիայի) յօգուտ կառավարչական թեկնածուների տուած է 2,405,935 ձայն, իսկ յօգուտ դիմադրական կուսակցութեան— 2,049,064 ձայն։ Եթէ պատգամաւորների թիւը համապատասխան լինէր ստացած ձայների քանակութեան, այն ժամանակ Մեծ-Բրիտանիայի 567 պատգամաւորական տեղերը ապագայ համայնքների ժողովում պէտք է բաժանվէին 310 պահպանողականների եւ 257 ազատամիտների մէջ, այն ինչ այդ 567 տեղերը իսկապէս բաժանված են 380 պահպանողականների եւ 187 ազատամիտների մէջ, ուրիշ խօսքով՝ պահպանողականները պէտք է գերակշիռ լինէին ազատամիտներից միայն 53 ձայնով, այն ինչ այժմ նրանք գերակշիռ են 193 ձայնով։ Աւելի պարզ կերպով անհամաչափութիւնը ստացած ձայների եւ պատգամաւորների թւի մէջ երեւում է հետեւեալ հաշիւից. բրիտանական ընտրողների մէջ՝ ամեն մի 9 հոգուց 5-ը ձայն են տուել յօգուտ պահպանողականների, իսկ 4-ը—յօգուտ ազատամիտների, այն ինչ համայնքների ժողովի անդամների մէջ՝ ամեն մի 9 հոգուց 6-ը պահպանողականներ են եւ միայն 3-ը ազատամիտներ։

(Рус. Вѣд.)

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—

«Սուրհանդակ» լրագրի մէջ կարդում ենք. «Անտիոքի հայ բնակչաց մէջ դաւանափոխութեան խլրտում մը ծանուցուած էր պատրիարքարան, որ բացատրութիւն պահանջած էր տեղւոյն առաջնորդէն։ Վիճակին առաջնորդական փոխանորդ Թադէոս վարդապետ կը գրէ թէ՝ տեղւոյն վարժարանները նիւթապէս եւ բարոյապէս անբաւական եւ անգոհացուցիչ ըլլալուն, եւ ասոր հակառակ լատին վարժարաններն ալ ոչ միայն ձրի ուսում, այլ եւ ձրի դասագիրք, ձրի զգեստ եւ մինչեւ իսկ կարօտաչակերտաց դրամական նուէրներ ալ տալուն պատճառաւ, հրապուրուած է ժողովուրդը, հետեւաբար այս վիճակին առաջքը առնելու համար կառաջարկէ պատրիարքարանի՝ առնուազն 150 ոսկի նպաստ մը սահմանել յիշեալ վիճակին դպրոցներուն, պակասեալ գումարը կարող ազգայիններէն հայթայթելու պայմանաւ, որպէս զի կարողանայինք ալ համոզել իր ժողովուրդը, որ մի եւ նոյն պայմաններու տակ չարունակէ իրենց զաւակները ղրկել ազգային վարժարանները։

«Երեք պատրիարքների միջեւ այցելութիւններ փոխանակուեր եւ սիրալիր տեսակցութիւններ տեղի ունեցեր են անցեալ շաբթու, ինչպէս կը գրէ մեզ մեր Երուսաղէմի թղթակիցը։ Աղեքսանդրիոյ յունաց նորընտիր պատրիարք Ֆօթիոս, Երուսաղէմայ յունաց միաբանութեան անդամներէն է, եւ վերջերս Նազարէթի միտրօպոլիտութիւնը կը վարէր։ Ցիշեալ պատրիարքի պաշտօնը այս անգամ հաստատուած ըլլալով, Յարութիւն պատրիարք հայրը՝ ընկերակցութեամբ իր փոխանորդ Ներսէս եպիսկոպոսի եւ Ղեւոնդ եպիսկոպոսի, ինչպէս նաեւ չորս վարդապետներու, շնորհաւորական այցելութիւն տուեր է Ֆօթիոս պատրիարքին, եւ մեծ պատուով ընդունուեր է թէ նորընտիր պատրիարքէն եւ թէ Երուսաղէմայ յունաց պատրիարք Դամիանոսի կողմէ։ Երեք օր վերջ Դամիանոս եւ Ֆօթիոս երկու յոյն պատրիարքները, իրենց հետ ունենալով Աղեքսանդրիայէն եկած հրաւիրակները եւ ուրիշ եկեղեցականներ, փոխադարձ այցելութեան եկեր են ս. Յակոբեանց վանքը, որուն դռնէն սկսելով, զոյգ զոյգ վարդապետներ դիմաւորեր են զիրենք եւ պատրիարքարանի դահլիճը առաջնորդեր են։ Պատրիարքարանի դռնէն երկու պատրիարքները ընդունուեր են Ներսէս եւ Ղեւոնդ եպիսկոպոսներու կողմէ, եւ դահլիճին դռնէն դիմաւորեր է Յարութիւն պատրիարքը եւ ողջագուրուեր է անոնց հետ։ Խօսակցութիւնը թուրքերէն տեղի ունեցեր է թարգմանաբար, որովհետեւ երկու պատրիարքներն ալ թուրքերէն չեն գիտեր։ Երկու յոյն պատրիարքները խորապէս ազդուելով իրենց եղած ընդունելութենէն եւ պատուասիրութենէն, կրկին շնորհակալութիւն յայտներ եւ շնորհաւորեր են ս. Յակոբեանց միաբանութիւնը, որ Յարութիւն պատրիարքի նման վարչագէտ, կենսաղագէտ եւ պատկառելի պետ մը ունի իրեն։ Ֆօթիոս պատրիարք, Տիրաժոր եւ Փրկիչ գերեզմաններուն վրա պատարագ մատուցանելով իր հրաժեշտի քարոզը տալէ յետոյ, ամսոյս 13-ին մեկներ է մեծ հանդէսով, եւ նոյն օրն ալ պատրիարքական փոխանորդ Ներսէս եպիսկոպոս, թարգման Վահան վ-ի հետ կայարան գացեր է ողջերթ մատնելու Տ. Ֆօթիոսի, որ մեկնել է առաջ բազմաթիւ լուսանկարներ հանել տուեր է տեղացի հայազգի լուսանկարչի մը։ Տ. Ֆօթիոս պատրիարք 50 տարեկան զարգացեալ եկեղեցական մըն է, եւ բացի իր մայրենի լեզուէն գիտէ եւ՝ներ նաեւ ֆրանսերէն, արաբերէն եւ ռուսերէն լեզուները։»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բերլինից հեռագրում են «Рус. Вѣд.» լրագրին. «Նոր միայն ստացված տեղեկութիւնը անգլօ-գերմանական համաձայնութեան մասին ամենամեծ հետաքրքրութիւն է զարթեցնում։ Հակառակ ամենքի ակնկալութեան՝ բանակցութիւնները համաձայնութեան վերաբերմամբ տեղի էին ունենում խիստ գաղտնի կերպով։ Այս նոր երկպետեան դաշնակցութիւնը սահմանափակվում է երկու կէտով միայն՝ փոխադարձ օգնութեամբ Անգլիայի եւ Գերմանիայի տնտեսական շահերը Չինաստանում պահպանելու գործում եւ անձեռնմխելի ճանաչելով չինական երկիրները։ Անգլօ-գերմանական համաձայնութիւնը եւ նրա պատճառաբանութիւնը աչքի ընկնող քաղաքական նշանակութիւն ունեն։ Մինչեւ անգամ Անգլիայի ջերմ հակառակորդները ազատ չունչ քաշեցին՝ տեսնելով, որ Գերմանիա դուրս եկաւ վերջապէս իր առանձնացած դրութիւնից։ Բիւլովի դրութիւնը սաստիկ ամրացաւ՝ շնորհիւ անգլօ-գերմանական համաձայնութեան։ Գերմանական բոլոր լրագիրները միաբերան վկայում են, որ անգլօ-գերմանական համաձայնութիւնը, իբրեւ սկզբունք ընդունելով ազատ-առեւտրի քաղաքականութիւնը Չինաստանում, մեծ չափով կը նպաստէ ընդհարումներից խուսափելու գործին։ Սպասում են, որ միւս պետութիւններն եւս կը միանան անգլօ-գերմանական համաձայնութեանը։ Պաշտօնական լրագիրները պնդում են թէ համաձայնութիւնը չէ ուղղված ոչ մի պետութեան դէմ։»

—Հոկտեմբերի 3-ին Պարիզի Շաբրոլ փողոցում, 51-րորդ տան մէջ, ուր տեղաւորված էր հռչակաւոր «Շաբրոլ ամրոցը», մօտ օրերում տեղի ունեցաւ խուզարկութիւն։ Այդ տան մէջ գտնվում է «Antijuif» լրագրի խմբագրութիւնը։ Հետախուզութեան ժամանակ գտնվեցին շատ փաստաթղթեր, որոնցից երեւաց, որ օրէնքի պահանջի համաձայն լուծված հակահրէական միութիւնը նորից սկսել է իր գործունէութիւնը։

—«Morning Post»-ին հեռագրում են Շանղհայից. «Պրինց Տուան աշխատում է «Մեծ-բռունցքի» շարժումն առաջացնել Եանցէի հովտում։ Այն լուրը, թէ Տուան ենթարկված է պատժի, բոլորովին սուտ եւ խաբէութիւն է։ Չինական գործերի խառն դրութիւնը սաստիկ վնասում է առեւտրական գործերին Շանղհայում։ Չինական բանկերից երկուսը արդէն անանկացան եւ երեւի մինչեւ նոր տարին ուրիշ շատ բանկեր եւ առեւտրական տներ եւս կը դադարեցնեն իրանց գործունէութիւնը։

—Նոյն «Morning Post» հաղորդում է, թէ Շանղհայի բարձրաստիճան պաշտօնեաների եւ չինական խոշոր առեւտրականները տեղեկութիւն ստացան պրինց Տուանի հեռագրի մասին, որի մէջ ասված է, թէ արքունիքը ապահով դրութեան մէջ է։ Տուան խորհուրդ է տալիս չինացիներին համբերութիւն ունենալ եւ սպասել ցրտերին, որոնք կը ստիպեն «սպիտակ դեւերին» հեռանալ հիւսիսային նահանգներից։ Ապա Տուան յայտնում է, որ զինարանները պէտք է գիշեր-ցերեկ աշխատեն պատերազմական մթերք եւ զէնքեր պատրաստելու եւ որ բոլոր հայրենասէրները պէտք է միանան ու արտաքսեն օտարերկրացիներին Չինաստանից։

—Կ. Պոլսից «С.-Петерб. Вѣд.» լրագրի թղթակիցը գրում է. «Մեծ վիզիրը ներկայացրեց սուլթանին թիւրքաց այն պաշտօնեաների ցուցակը, որոնք, նորին բարձրութեան (վիզիրը բարձրութիւն տիտղոս է կրում) կարծիքով, պէտք է արձակվեն պաշտօնից, որպէս կատարելապէս անպէտք անձինք ծառայութեան համար։ Խալիլ-Ռիֆատ-փաշայի կարծիքով, թիւրքաց պաշտօնեաների քսան եւ ութ տոկոսը կարող են արձակվել ծառայութիւնից, առանց որ եւ է վնասի կառավարութեան համար, որի շահերը նրանք կոչված են պաշտպանելու։ Մեծ վիզիրը հաւատացնում է, որ այդ տիպիական պետական գործիչներից շատերը, որոնք գրաւել են փաշաների եւ բարձրաստիճան բէյերի պաշտօնները, ամբողջ ամիսներով չեն երեւում մինիստրութեան մէջ եւ մինչեւ անգամ նրանցից շատերը չը գիտեն, թէ ինչ պարտաւորութիւններ են իրանք կատարելու։ Կ. Պոլսում կարծում են, որ այդ ըէֆորմը կը տարածվի եւ զինուորական վարչութեան վրա, մանաւանդ որ զինուորական մինիստրից պահանջված է ներկայացնել այն օֆիցէրների ցուցակը, որոնք պաշտօնական որոշ պարտաւորութիւններ չեն կատարում։ Թիւրքաց օֆիցէրների չորրորդ մասը, եթէ ոչ աւելին, նոյնպէս կարող են արձակվել ծառայութիւնից, առանց որ եւ է վնասի»։

—Կ. Պոլսից հեռանալուց առաջ պարսից Շահը նշանաւոր գումար թողեց պալատական պաշտօնեաներին վարձատրելու համար։ Պալատի մինիստրը երկու գեներալ է նշանակել այդ փողերը բաժանելու համար։ Շահը, բացի դրանից, տարեկան 10,000 ֆրանկ նպաստ նշանակեց Կ. Պոլսի պարսկական դպրոցին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Երկաթուղու կայարանումն էի։ Գնացել էի ճանապարհ գցելու ծանօթիս, որն ուղեւորվում էր Բագու։ Այնտեղից նրան լաւ պաշտօն էին առաջարկել եւ նա ընդունել էր մի փոքր տատանումից յետոյ։ Մենք ժամանակ շատ ունէինք եւ խօսում էինք Բագուի եւ այնտեղ գտնվող ինտելիգենտների մասին։

—Երկու տարուց յետոյ, ամենաշատը երեք տարուց յետոյ ես կը թողնեմ Բագուն, ասում էր ծանօթս, ամուր թափ տալով իմ կուռը։

—Մի երդվիր, բարեկամ։

—Քեզ խօսք եմ ասում, հաստատ խօսք, վրդովված վրա բերեց նա։

—Բայց յիշում ես, սիրելիս, քանիսին ենք մենք ճանապարհ գցել այդպիսի տրամադրութեամբ։ Եւ ոչ ոք չէ վերադարձել։

Իմ խօսքերը վիրաւորեցին ծանօթիս։ Այդպէս վիրաւորվել էին նրա բոլոր նախորդները։

Զանգը խփեցին, ուղեւորները չտապեցին դէպի վագոնները տեղեր գրաւելու։ Ծանօթս զբաղվեց իր իրերը տեղաւորելու գործով։ Ես սկսեցի դիտել ուղեւորներին։ Ցանկարծ աչքիս ընկաւ իմ վաղեմի ծանօթ Սանիկեանը, որ նոյնպէս բագուցի էր դարձել վեց տարուց ի վեր։

—Սանիկեան, դու ես, որտեղից որտեղ...

—Ո՞ւմ եմ տեսնում։ Ա՜հ, որքան ուրախ եմ, բացականչեց Սանիկեանը փայլուն ժպիտով։

—Եկել ես, թէ գնում ես, հարցրի ես. որտեղ ես պճնվել այդպէս չքեղ եւ օտարոտի կերպով։

—Ես գալիս եմ ուղիղ Պարիզից։ Օդեսայից չոգենաւ նստեցի։ Գիտես ինչ նստեց ինձ վրա իմ ճանապարհորդութիւնը։ Մի բան պակաս երեք հազար բուբլուց։ Շտապում եմ Բագու։ Գնամ նորից խրվեմ նաւթի մէջ մինչեւ, մինչեւ, էհ մինչեւ մի նոր ճանապարհորդութիւն։

Սանիկեանն էլ այն պարոններից էր, որ խոստացել էր Բագուից չուտով դուրս պրծնելու եւ հրատարակչական գործով զբաղվելու։

—Սանիկեան, գիտես, ով է այսօր քեզ հետ Բագու գնում, Դաւթեանը. պաշտօն է ստացել այնտեղ։

—Ի՞նչ ես ասում, ուր է նա. այդ լաւ է, միասին կերթանք։

Մենք գնացինք Դաւթեանին որոնելու։ Ուղեւորների թիւը շատ էր. ազատ տեղ քիչ կար։ Սանիկեանի համար տեղ յատկացրինք Դաւթեանի մօտ։ Խօսելու ժամանակ այլ եւս չը կար։

—Զը մոռանաս, Դաւթեան, ասացի նրան բաժանվելուց առաջ, աշխատիր մի բան աղուղեցնել։

—Ի՞նչ բանի մասին է ձեր խօսքը, մէջ մըտաւ Սանիկեանը։

—Միջատներից աւերված գիւղերի մասին է, բացատրեցի ես. պէտք է օգնել խեղճ գիւղացիներին. գուցէ կարողանաք Բագուից օգնութիւն ուղարկելու։

—Հաղիւ թէ. սառն կերպարանքով նկատեց Սանիկեանը, այժմ քհատութեան տարի է. ոչ ոք ոչինչ չի տայ։ Փողի մեծ կարօտութիւն կայ։

—Ի՞նչ ես ասում, վրդովված խօսեց Դաւթեանը։ Այդ ինչու փող կը գտնվի տաք չրեր եւ արտասահման գնալու համար, իսկ խեղճ եւ կարօտ գիւղացիներին օգնելու համար չի գտնվի։ Պէտք է գտնենք։

—Դեռ նոր ես, դեռ անփորձ ես, հեգնական ժպիտով նկատեց Սանիկեանը։

Գնացքը շարժվեց. մենք բաժանվեցինք։

Վրթին.

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

11 հոկտեմբերի

ԿԱՆՏՕՆ։ Ծովահէնները կողոպտեցին Կանտոնից 10 մղոն ներքեւ մի նաւակ 100 ճանապարհորդներով։ Կողոպտողները փախան՝ տանելով իրանց հետ կողոպուտը, Երկիւղ են կըրում, որ կողոպտումները կարող են սաստկանալ։

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ։ Ռուսական մի զինուորական նաւ, որ չինված է ամենանոր ձեւով, այսօր իջեցրած է ջուրը։

ՆԻՒ-ԻՕՐԿ։ Հոկտեմբերի 8-ին Պեկինից ուղարկված մի հեռագիր հաղորդում է, որ դեսպանների եւ Լի-Խունգ-Չանգի ու Ցինի մէջ տեղի ունենալիք խորհրդակցութեան օրը դեռ ես չէ նշանակված։ Մի քանի դեսպաններ դեռ ես չունեն հրահանգներ, երկուսը բացակայ են եւ մէկը հիւանդ է։

ՀՌՕՄ։ Իտալական թագաւորը ստացաւ չինական կայսրից մի հեռագիր, որի մէջ կայսրը խնդրում է օգնել նրան դժուարութիւնները վերացնելու եւ չուտով խաղաղութիւն կնքելու գործում։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը մտադիր է միանալ անգլօ-գերմանական համաձայնութեան մի քանի օրից յետոյ միայն, որովհետեւ այդ գործը պահանջում է հասուն քննադատութիւն։ Առանձնապէս ցանկալի է բացատրութիւններ ունենալ համաձայնութեան երրորդ կէտի վերաբերմամբ։ Այսու ամենայնիւ չեն կասկածում, որ վերջ ի վերջոյ տեղի կունենայ պայմանական համաձայնութիւն։ Դեսպան Կոնջեր շարունակ տեղեկութիւններ է հաղորդում արտաքին գործերի մինիստրութեանը այն առաջարկութիւնների մասին, որ անում են դեսպանները խորհրդակցութիւնների ժամանակ։ Մինչեւ այժմ չէ կարելի ցոյց տալ, թէ տեղի է ունեցել որ եւ է աջողութիւն. իրերի դրութեան մէջ ես չէ նկատվում որ եւ է զգալի փոփոխութիւն։

ԼՕՆԴՕՆ։ «Петербургскія Вѣдомости» լրագրի նկատողութեան մասին, թէ անգլօ-գերմանական համաձայնութիւնը ուղղված չէ Ռուսաստանի դէմ, «Ռէյտերի գործակալութիւնը» ասում է, թէ այդ հայեացքը բոլորովին ճիշդ է եւ թէ համաձայնութիւնը դիտաւորութիւն չունի դիպչելու ռուսական երկաթուղիական կօնցէսսիաներին Մանջուրիայում։ Համաձայնութեան նպատակը Չինաստանի անձեռնմխելիութիւնն է եւ նա ի նկատի չունի այն դէպքերը, երբ պետութիւնների մէջ կարող են տեղի ունենալ համաձայնութիւններ՝ երկաթուղիական ճանապարհներ չինելու մասին Երկնային կայսրութեան մէջ։

ՄՕՍԿՎԱ։ Մոսկվայի գաւառական զեմստվո-

յի ժողովը վճռեց հիմնել Մոսկվայի գաւառական հողային բանկ։

ՏԵԱՆՁԻՆ։ Գենեռալ Կեմպբէլ հոկտեմբերի 4-ին հասաւ Բաֆան՝ արշաւանքի զօրաբաժնի ձախակողմեան զօրասիւնի հետ միասին։ Վերջին երկու շաբաթների ընթացքում Բաֆան գրաւված էր 1,500 չինացիներից բաղկացած մի զօրաբաժնով, որից 1000 հոգի, անգլիացիների գալուց առաջ ճանապարհ ընկան դէպի հարաւ։ Մի չինացի գեներալ վիրաւորված է սեպտեմբերի 30-ին այն ընդհարման ժամանակ, որ տեղի ունեցաւ «Մեծ-բռունցքի» հետ Բենչժօուի մօտ։ Գտնված է պրինց Տուանի յայտարարագիրը, որով նա հրամայում է ոչնչացնել Պաօտինֆու գնացող արշաւագունդը՝ առաջարկելով զէնքեր չինական կառավարութեան կողմից։ Կեմպբէլ ուղեւորվեց դէպի հարաւ՝ Պաօտինֆուի ուղղութեամբ. Տեանձինից ուղեւորված արշաւագնդի մնացեալ մասը հոկտեմբերի 10-ին միացաւ Գեզլիի զօրաբաժնի հետ։ Ենթադրում են թէ արշաւագունդը հասել է Պաօտինֆու հոկտեմբերի 8-ին։

ՍԻՄԼԱ։ Բրիտանացի մի պօրուչիկ եւ 45 չէյխեր երէկ սպանվեցին Զանդօլի մօտ տեղի ունեցած կռւում Մախսուի եւ վազիրիների դէմ, որոնք աւազակային յարձակումներ են գործում։

ՊԱՐԻԶ։ Դէլկասէ ստացաւ Պիշօնից երկու հեռագիր՝ ուղարկված հոկտեմբերի 7-ին, պաշտօնական գործերի վերաբերմամբ։ Այդ հեռագիրներում ոչինչ չէ հաղորդվում Պիշօնի առողջութեան մասին։

12 հոկտեմբերի

ԽԱՆԿՕՈՒ։ Չինական կայսրը, հոկտեմբերի 7-ին Սինանֆու ուղեւորվելիս, հասաւ Տուկան։ Կայսրը Սինանֆու սպասվում է հոկտեմբերի 13-ին։

ԼՕՆԴՕՆ։ «Glob»-ում երեւեց տեղեկութիւն, որ իբր թէ անգլիական կառավարութիւնը կապալով է վերցրել Ցինվանտաօ նաւահանգիստը։ «Բէյտէրի գործակալութիւնը» հաղորդում է, որ այստեղի պաշտօնական շրջաններում ոչինչ յայտնի չէ այդ մասին։

ՊԵԿԻՆ։ Հոկտեմբերի 3-ի այն յայտագրի պատասխանը, որ Լի-Խունգ-Զանգ եւ Ցին յանձնել են դիպլոմատիական ներկայացուցիչներին, դեռ եւս չէ ուղարկված։ Ասում են, թէ դեսպանները կամենում են միասին մշակել այն պայմանները, որոնք անհրաժեշտ են հարցը կարգադրելու համար եւ ներկայացնել նրանց իբրեւ ուլտիմատում, որովհետեւ հակառակ դէպքում բանակցութիւնները կարող են ձգձգվել անվերջ։

Ստացված է մի հեռագիր չինական կայսրից, ուղարկված սեպտեմբերի 29-ին Տունկուանից, որ գտնվում է Դեղին գետի վրա։ Հեռագրի մէջ չը կայ ոչ մի ցուցում, թէ արքունիքը ժտադիր է վերադառնալ Պեկին։ Ներկայումս արքունիքը գտնվում է ամբողջովին Տունֆուձեանի եւ Կանսուի զօրքերի ազդեցութեան տակ, որոնց շահերը պահանջում են, որ արքունիքը մնայ Սինանֆու։

Ռուսաց դեսպանը այսօր վերադարձաւ այստեղ։

Ռուս-չինական բանկը հրաման ստացաւ վերսկսելու իր գործունէութիւնը։

ՎԻԵՆՆԱ։ Հաւատացնում են, որ Աւստրօ-Ունգարիան միացաւ անգլօ-գերմանական համաձայնութեան չինական գործերի վերաբերմամբ։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում երէկ վճռվեց շարունակել ցուցահանդէսը մինչեւ հոկտեմբերի 29-ը։

ԷԼԲԷՐՖԷԼԴ։ Քաղաքային խորհրդարանում առաջարկած կենացների ժամանակ Վիլհէլմ կայսրը եւ բուրգոմիստրները փոխադարձ ճառեր արտասանեցին։ Իր պատասխան ճառը բուրգոմիստր Բարմէնին կայսրը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Որ իմ առաջին նպատակը եւ ամենամեծ ջանքը յօգուտ իմ ժողովրդի հնարաւորութեան չափ խաղաղութեան պահպանութիւնն է՝ ես, կարծում եմ, դրա նոր ապացոյցը ներկայացրի այս օրերս, այն է համաձայնութիւն գերմանական ցեղի ամենազօրեղ պետութեան հետ, որը, ինչպէս ես յոյս ունեմ, երկար ժամանակով հնարաւորութիւն է տալիս երկու ժողովուրդներին ազատ կերպով ձգտել դէպի համաշխարհային շուկային եւ եղբայրական մրցակցութեան։

ԼՕՆԴՕՆ։ Ռոբերտսի հեռագիրը Պրէտորիայից հոկտեմբերի 9-ից հաղորդում է, որ Ֆրէնչ Կարօլինայից եկաւ Բէյտել հոկտեմբերի 7-ին, մի եւ նոյն ժամանակ ճանապարհի մեծ մասի վրա, մանաւանդ Էրմէլօի մօտ, դիմադրութեան էր հանդիպում. նրա զօրաբաժնից հոկտեմբերի 3-ին սպանված են մէկ օֆիցէր եւ հինգ զինուորներ, վիրաւորված են երեք օֆիցէրներ եւ 16 զինուորներ, իսկ հինգ մարդիկ անհետ կորան. հոկտեմբերի 4-ին վիրաւորված են չորս մարդիկ. հոկտեմբերի 7-ին սպանվեց մէկը եւ վիրաւորվեցին չորս հոգի։ Սէտոլի զօրասիւնը հասաւ Հօօպստադտին, ճանապարհին ենթարկվելով բօէրների յարձակումներին։ Մէկ օֆիցէր եւ 15 զինուորներ վիրաւորվեցին։

Զէէրուստի մօտ տեղի ունեցաւ յարձակումն Մէտուէնի զօրաբաժնի արշաւախմբի վրա. սպանվեցին մի օֆիցէր եւ մի զինուոր. վիրաւորված են մի օֆիցէր եւ 8 զինուոր։

Բարտօնի զօրքերից մի զօրաբաժին հոկտեմբերի 5-ին Ֆրեդերիկսդատում ենթարկվեց յարձակման։ Երկու օֆիցէր եւ երկու զինուորներ գերի տարվեցին, երկու զինուոր սպանված են եւ 4-ը վիրաւորված։ Հոկտեմբերի 8-ին Բարտոն նորից կռիւ ունեցաւ բօէրների դէմ, որոնք գործում էին մեծ յանդգնութեամբ. այդ կռւում սպանվեց մէկ օֆիցէր։

Պինար գետի մօտ բօէրների զօրաբաժինը ենթարկվեց անակնկալ յարձակման. մի անգլիացի վիրաւորված է. 18 բօէրներ գերի են առնված։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

—

№ 5 գնացքը։		№ 3 գնացքը։	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը։		№ 4 գնացքը։	
Բաթումից դուրս է գալիս առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	7 » 45 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 «
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ.	8 »	05 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—5—6 ժ.

Ա. Ն. Շեյակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ֆ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մասնամասնագ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъ-фонъ-Бреннеръ

1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.

2] Самоучитель двойной бухгалтеріи и

3] Руководство по составленію отчетовъ.

Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.
19—20

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՄԵԼԻՔ-ԻԻՍՈՒՓ

պատմական պօէմա
Գինն է 20 կօպ.
Тифлисъ, Центральная Книжная Торговля. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտնում է, որ նա կապալով է տալիս քաղաքային չորս խանութներ, որոնք գտնվում են Բաղարնայա փողոցի վերջում, այն քառակուսի տարածութեան վրա, որ մտնում է Ալէքսանդրեան այգու մէջ։ Այդ խանութները կապալով վերցնել ցանկացողները պայմանների մասին տեղեկանալու համար պէտք է դիմեն քաղաքային վարչութեան 4-րդ բաժանմունքը։
3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. լոյս տեսած գրքերը.

172 Առակք Լաֆոնթէնի, թ. Մ. Նուպարեանի	1 —
173 Գռեհիկ, Օժէշկօի, թարգմ. Ա. Մ.	—40
174 Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մ.	— 5
175 Հայկական նշանագրեր հարթակարի համար, օր. Ե. Պատկանեանի	—80
176 Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի բ. տպ.	1 —
177 Սիֆիլիս, կակուղ շանկր և սուսունակ, բժշկ. Վահան Արծրունու	—25
178 Մանկական լոտո, հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն լեզուով, բ. տպ.	1 —
179 Մակսիմկա, Ստանիւկեվիչի, թարգմ. Ա. Մ.	—15
180 Թշուառների բարեկամ, փոխ. բժշկ. Վ. Արծ.	—20
181 Իւլեանկա, թարգմ. Պ. Հովուեանցի.	—10
182 Արդար ծերունի, Հիւգօյի, թարգմ. Ա. Մ.	—15
183 Եաի արկածքները, Օժէշկօի, թարգմ. Պ. Պ.	—10
184 Պառաւ ծիտը, թարգմ. Ն. Սարգսեանի	— 3
185 Ի՞նչ է խօսում սենեակը, թարգմ. Զ. Ն.—Գ.	—10
186 Միլ'տօն, կազմեց Հ. Առաքելեան	—30
187 Մեծապատիւ մուրացկաններ, Յ. Պարոն. դ. տպ.	—40

Վաճառվում են Ընկերութեան օգտին

Ազատութեան մասին, Միլլի, թարգմ. Ա. Կ.	1 20
Ֆրանս-Պրուսական պատերազմը	— 5
Ծողովածու Մոսկվայի հայ ուսանողների	1 —
Կարին վարդապետ և նորին թարգմանութիւնք, գրեց Նորայր Հ. Բիւզանդացի	1 50
Ագուլեցոց բարբառը, Ս. Սարգսեանի	2 —
Մեղուներ, Լ. Լանդստրօտ, թարգմ. Զօկ	—15

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. 8—10

ԲԺԻՇԿԱՊԵՏ Ա.ԻԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆ

վերադարձած Թիֆլիս, սկսել է ընդունել իր նախկին բնակարանում (Սերգիեվսկի 14)

Կուրծքի եւ այլ ներքին հիւանդներին 10—12 ժ. առաւօտ.։

Նեարդայիններին եւ բեվատիկներին 5—6½ ժ. երեկ. (չ. ե. հ.) 4—6

ՆՕՏԱՐ

ԻԼԻԱ ԻՎԱՆՕՎԻՉ

ԾԻՆԱՄԱՂՎԱՐՕՎԻ

գրասենեակը բաց է ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 9 ժամից մինչեւ 3-ը։ Վելիամինօվսկայա փողոց, № 2, վերին յարկ։
1—3

Շուտով լոյս կը տեսնի

ՄԱԿԱՐ ՀՄՐՇԿԵԱՆԻ

1901 թ. «ԾՈՑԻ», «ՊԱՏԻ», «ՍԵՂԱՆԻ» եւ „АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЬ“ ՕՐԱՑՈՒՅՑՆԵՐԸ

Ցանկացողները թող վաղօրօք յայտնեն, որպէս զի ժամանակին կարողանան ստանալ։
(Ե. չ.) 6—15

Բ Ժ Ի Շ Կ

ՏԻԳՐԱՆ ԹԱՓԻՈՍԵԱՆ

Ընդունում է առաւօտեան 11—12 ժ. եւ երեկոյեան 5—6 ժ.

Մասնագիտութիւն՝ ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։

Шелковниковская (Большая Кривая), д- Шаумова, № 18. 7—20

ԲԺԻՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ].
23—25

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ, 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խարազեանի. Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. հ. չ. 22—25

Անդրկովկասեան Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը սկսելով իր գործունէութիւնը, սրանով յայտարարում է, որ առաջին վճարը ամեն մի մասի 5% որ է տասն ռուբլի նշանակած է այս ամսի հոկտեմբերի 14 մինչեւ 18, իսկ երկրորդ վճարը 10%, որ անում է քսան ռուբլի, նշանակած է նոյեմբերի 1-ից մինչեւ 5-ը։

Փողերի ընդունելութիւնը լինելու է վարչութեան գրասենեակում (Пушкинскій Пассажъ верхній этажъ (отъ 10-и часовъ до 2-хъ)։
(13, 15 եւ 17 հոկ. 1, 3 եւ 5 նոյ.) 1—6

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝

Նախաշեանց Յակ. քահ., Զայնագրեալ տաղարան ի պէտս սպասաւորաց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1900 թ., գ. 50 կ.։

Տաղաւարեան Ն. տօքտ., Մարդկային սաղմնախօսութիւն, Կ. Պոլիս, 1900 թ., գ. 50 կ.։

Տիգրանեան Լ. բժ., Փառաստ, ողբերգութիւն Գէօթէի, Երեւան, 1900 թ., գ. 2 ր.։

Տէր-Մի քելեան Ա., Ուսումն սուրբ գրոց (Ներածութիւն) ա., Թիֆլիս, 1900 թ., գ. 1 ր.։

Ֆլամարիօն Կ., Ուրանիա, աստղագիտական վէպ, թարգ. ֆրանս. Հ. Առաքելեանցի, Թիֆլիս, 1900 թ., գ. 1 ր. 50 կ.։

Гикманъ и Марксъ, Географическо-Статистическій атласъ, Спб., 1900 г., ц. 2 р.

Кнейпъ. Мое водолеченіе, пер. Заффермана, свѣренное съ подлин. нѣм. оригиналомъ, ц. 1 р. 70 к.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (о.) 3—3

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ

ЖЖЕНЫЙ КОФЕ

ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°

(Е) 11—26

Սարգիս Վ. Աբրահամեան

Հասցէ. Սօլօլակ, Դանօվսկայա փող. տ. Թամամշեվի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով.
2) Առեւտրական թուաբանութիւն.
) Առեւտրական թղթակցութիւն։
4) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ (չ. ո. չ.) 12—14

Дозволено цензурою, Тифлисъ. 12 Октября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.